

ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարությանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների համակարգի բարեփոխումների գործողությունների ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների համակարգի բարեփոխումների գործողությունների հենքային փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Կառավարության
2011 թվականի N Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

2011, ԵՐԵՎԱՆ
Բովանդակություն

1. Հապավումների ցանկ
2. Ներածություն
3. Ռազմավարության նպատակն ու մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը
4. Բարեփոխումների նպատակը
5. Մտավոր սեփականության իրավունքների համակարգի զարգացման հեռանկարն ու առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում
6. Մտավոր սեփականության իրավունքների համակարգի ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում
 - 6.1. Օրենսդրական դաշտը
 - 6.2. Ազգային օրենսդրությունը
 - 6.3. ՀՀ միջազգային պայմանագրերը
 - 6.4. Ինստիտուցիոնալ կառուցվածքը
 - 6.4.1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալությունը
 - 6.4.2. Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողով
 - 6.4.3. Իրավակիրարկման այլ մարմիններ և կազմակերպություններ
 - 6.4.4. Անդամակցությունը միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին և դրանց հետ համագործակցությունը
7. Իրականացվելիք բարեփոխումները
 - 7.1 Օրենսդրական բարեփոխումներ
 - 7.1.1. Ապրանքային նշաններ
 - 7.1.2. Աշխարհագրական նշումներ և ծագման տեղանուններ
 - 7.1.3. Գյուտեր և օգտակար մոդելներ
 - 7.1.4. Արդյունաբերական նմուշներ
 - 7.1.5. Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ
 - 7.1.6. Դեղագործական տվյալների պաշտպանություն, տվյալների նկատմամբ բացառիկ իրավունք
 - 7.1.7. Միջազգային պայմանագրեր
 - 7.1.8. Մտավոր սեփականության իրավակիրարկում
 - 7.2 Ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում և համագործակցություն մտավոր սեփականության իրավակիրարկումն ապահովելու նպատակով
 - 7.2.1 Դատական համակարգ
 - 7.2.2 Ոստիկանություն
 - 7.2.3 Մաքսային ծառայություն

- 7.2.4 Փորձագիտական հիմնարկ և մտավոր սեփականության իրավունքների այլ փորձագետներ
- 7.2.5 Մտավոր սեփականության իրավունքների տեղեկատվական կենտրոն
- 7.2.6 Վերապատրաստում ՄՍ իրավունքների ոլորտում
- 7.3 Մտավոր սեփականության բնագավառում իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված գործողություններ և շահագրգիռ կողմերի վերապատրաստում
- 7.4 Անհետաձգելի գործողություններ
- 7.5 Ձեռնարկվող հիմնական գործողությունները
- 7.6 Բարեփոխումների մոնիտորինգ
- 8. Բարեփոխումների գործողությունների ծրագիր
 - 8.1 Ուղղությունները
 - 8.2 Ուղղությունների փուլերն ու նպատակակետերը
- 9. Ռիսկերը, ներգրավվածությունը և հաջողության ցուցանիշները
- 10. Բարեփոխման համար կատարվելիք ծախսերը
- 11. Բարեփոխումների ղեկավարումը, մոնիտորինգը և գնահատումը
- 12. Եզրակացություն

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Ռազմավարություն	Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության սույն ռազմավարությունը
ՄՍ	Մտավոր սեփականություն
ՄՍՀԿ	Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն
ԱՀԿ	Առևտրի համաշխարհային կազմակերպություն
ՄՀԿ	Մաքսային համաշխարհային կազմակերպություն
ԵԱԱԿ	Եվրասիական արտոնագրային կազմակերպություն
ԵԱԿ	Եվրոպական արտոնագրային կազմակերպություն
ՌԻՊՕՎ (UPOV)	Բույսերի նոր սելեկցիոն նվաճումների միջազգային միություն
ՓԼԹ(PLT)	Արտոնագրային իրավունքի մասին պայմանագիր
ՌԹԼԹ(RTLT)	Ապրանքային նշանների իրավունքի մասին վերանայված պայմանագիր
ԵՀՔ	Եվրոպական հարևանության քաղաքականություն
ԳՀՀ	ԵՄ–Հայաստան գործընկերության և համագործակցության համաձայնագիր
ԵՄ	Եվրոպական Միություն
ԷՆ	ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն

ԳՆ		ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
ԱՆ		ՀՀ Առողջապահության նախարարություն
ՖՆ		ՀՀ Ֆինանսների նախարարություն
ՄՆ		ՀՀ Մշակույթի նախարարություն
Արդ.Ն		ՀՀ Արդարադատության նախարարություն
ՊԵԿ		ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
ԽՀԱԱՀ		Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագիր
ՀՀ	կամ	Հայաստանի Հանրապետություն
Հայաստան		
ՄՍԳ		Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն
Հանձնաժողով		Հայաստանում կեղծարարության և հեեության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողով (OBSERVATORY)

2. Ներածություն

Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարությունը (այսուհետ՝ ռազմավարություն) վերաբերում է մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերին, որպես ՀՀ առևտրային և արդյունաբերական ընդհանուր քաղաքականության մաս: Այդ պատճառով, սույն ռազմավարությունը մշակվել է Հայաստանում տնտեսությունը բարելավելու, ստեղծագործական և ներդրումային բարենպաստ միջավայր ստեղծելու, ինչպես նաև Եվրամիության և Հայաստանի Հանրապետության միջև «Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի» (ԽՀԱԱՀ) ստորագրման գործընթացը հեշտացնելու նպատակով: Ռազմավարությունում հաշվի են առնվել Հայաստանում մտավոր սեփականության իրավունքների համակարգի ներկա վիճակը, շահագրգիռ կողմերի և Եվրոպական հանձնաժողովի առաջարկություններն ու հուզող խնդիրները, ինչպես նաև այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության ձեռնարկած գործողությունները:

ՄՍ իրավունքները քաղաքական մեծ նշանակություն ունեն ամբողջ աշխարհում, քանի որ՝

1. դրանք կարևոր դեր են խաղում գիտելիքահենք տնտեսության և տնտեսական աճի համար,
2. դրանք ազդեցություն ունեն զարգացման ծրագրի վրա,
3. դրանց կեղծումը և հենությունը բարձրացնում են աշխատատեղերի և տնտեսական կորուստների, ինչպես նաև առողջությանը և անվտանգությանը հասցվող վնասների ռիսկերը:

Այս առումով, վերջին մի քանի տարիների ընթացքում շատ երկրներ մշակել են ՄՍ իրավունքների ռազմավարություններ, որոնք տարբեր են՝ ըստ յուրաքանչյուր երկրի կարիքների:

Եվ՝ Հայաստանին, և՛ Եվրամիությանը անհրաժեշտ են ՄՍ իրավունքների պահպանությունն ու պաշտպանությունը գլոբալ տնտեսությունում մրցակցելու համար: Անշուշտ, քանի որ Եվրամիությունը մրցունակությունը կառուցում է նորարարության և արտադրանքին տրվող բարձր ստեղծագործական արժեքի հիման վրա, և Հայաստանի նպատակն է հետևել այդ ուղղությանը, ապա ՄՍ իրավունքների պահպանությունն ու կիրարկումն ընկած են գլոբալ տնտեսության մեջ այս երկու շուկաների մրցունակության կարողության հիմքում: Ե՛վ Եվրամիության, և՛ Հայաստանի զարգացումը խոչընդոտվում է, երբ մեր մտքերը, բրենդներն ու արտադրանքը կեղծվում են: Ավելին, կեղծ դեղորայքը, խաղալիքները, պահեստամասերը և սննդամթերքը հաճախ վտանգում են մեր քաղաքացիների անվտանգությունն ու առողջությունը:

Հայաստանի և Եվրամիության միջև կնքված «Գործընկերության և համագործակցության համաձայնագիրը» (ԳՀՀ), որն ուժի մեջ է մտել 1999 թ., առանձնացնում է ՄՍ իրավունքների պաշտպանության կարևորությունն այնպիսի բնագավառներում, ինչպիսիք են գործարարությունն ու ներդրումները: Հետևաբար, Եվրամիության (ԵՄ) եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) միջոցով, մյուս ասպեկտների կողքին, Հայաստանին առաջարկվում է տնտեսական և մշակութային կապեր հաստատել Եվրամիության հետ, ընդլայնել տարածաշրջանային և սահմանային համագործակցությունն ու

առևտուրը: Այսպիսով Հայաստան-ԵՄ ԵՀՔ գործողությունների ծրագիրը (Նոյեմբեր 2006) նախատեսում է գործողություններ Հայաստանում ապահովելու ՄՍ իրավունքների պաշտպանությունն ու դրանց ստանդարտները ԵՄ և միջազգային չափանիշներին համաձայն, ներառյալ՝ մաքսային հսկողության խստացումը ներմուծվող և արտահանվող կեղծ կամ հենական ապրանքների նկատմամբ:

ԵՄ-Հայաստան ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը՝

1. ուշադրությունը կենտրոնացրել է ազգային օրենսդրությունը ԵՄ չափանիշներին մոտարկելու վրա,
2. նախնական քայլեր է ձեռնարկել ՄՍ իրավունքների կիրարկման ուղղությամբ՝ համապատասխանեցնելով այն միջազգային և ԵՄ չափանիշներին,
3. տարվել են ՄՍ իրավունքների իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

ՀՀ կառավարությունը գիտակցում է, որ Հայաստանում դեռ կան մի շարք խնդիրներ կապված ՄՍ իրավունքների պաշտպանության հետ: Այս խնդիրներից են կեղծարարության և հենության մակարդակի նվազեցումը, ազգային օրենսդրության մոտարկումը ԵՄ չափանիշներին, ՄՍ իրավունքների պաշտպանության օրենսդրության արդյունավետ կիրարկման ապահովումը, մասնավորապես՝ հենության և կեղծարարության դեմ պայքարի մասով, բարձրացնելով իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, մաքսային ծառայություն և այլն) գործունեության արդյունավետությունը, ՄՍ իրավունքների քաղակականության և կիրարկման համար պատասխանատու պետական մարմինների և լայն հասարակության մոտ իրազեկման մակարդակի բարձրացումը: Սակայն առկա խնդիրները չեն սահմանափակվում միայն թվարկվածներով:

3. Ռազմավարության նպատակն ու ՄՍ իրավունքների պաշտպանությունը

ՀՀ կառավարությունը գիտակցում է, որ մտավոր սեփականության իրավունքների արդյունավետ և հուսալի պաշտպանության համակարգը խթանում է գիտությունն ու նորարարությունն ապահովելով կայուն նախադրյալներ հեղինակների և նորարարների մտավոր արժեքներ ստեղծելու համար: Կառավարությունը նաև գիտակցում է, որ մտավոր արժեքների արդյունավետ օգտագործումը շահավետ է ոչ միայն հեղինակների կամ նորարարների համար, այլև կարևոր է լայն հասարակության համար: Այս պատճառով, սույն ռազմավարության և ընդհանրապես ՄՍ նպատակը դրա կարևորության գիտակցումն է ու ՄՍ իրավունքների պաշտպանությանն աջակցելն է՝ խթանելու համար ստեղծագործական աշխատանքն արվեստի, գիտության, գիտահետազոտական աշխատանքների բնագավառներում, ինչպես նաև տեխնիկական առաջընթացը, և դրանց արդյունքների տարածումն ու կիրառումը շուկայում: Այն իր հերթին, որպես հզոր ուժ, կձառայի նորարարության զարգացմանը և կնպաստի Հայաստանի տնտեսական և սոցիալական զարգացմանը:

4. Բարեփոխումների նպատակը

ՄՍ իրավունքների համակարգի բարեփոխումների նպատակը ՀՀ-ում տնտեսության և արվեստի զարգացումն է, ինչպես նաև Հայաստանի մրցունակության բարձրացումը գլոբալ տնտեսությունում: ՄՍ իրավունքների արդյունավետ համակարգը գիտելիքահենք տնտեսության հիմնախնդիրներից մեկն է:

Բարեփոխումները պետք է նաև ունենան ինստիտուցիոնալ բնույթ՝ ԵՄ-Հայաստան խորը և համապարփակ ազատ առևտրային համաձայնագրերի (ԽՀԱԱՀ) կնքման գործընթացը սկսելու և հաջողության հասցնելու համար:

Բացի այդ, ՄՍ իրավունքների կիրարկման արդյունավետ համակարգը կարևոր է նաև այլ ոլորտների քաղաքականության համար, ինչպիսիք են՝ հասարակության առողջությունն ու ապահովությունը, սպառողների պաշտպանությունն ու շուկայական մրցակցությունը:

Այսպիսով, բարեփոխումների նպատակն է մշակել ՄՍ իրավունքների կիրարկման առավել արդյունավետ ընթացակարգեր և բարձրացնել հասարակության իրազեկման մակարդակը ՄՍ իրավունքների ոլորտում, այնպես, որ ՄՍ իրավունքների համակարգը նպաստի վերը նշված նպատակների իրականացմանը:

5. Մտավոր սեփականության իրավունքների համակարգի զարգացման հեռանկարն ու առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում

ՄՍ իրավունքների համակարգի առաքելությունն է Հայաստանում պաշտպանել և խթանել արվեստի ստեղծագործությունները, գիտահետազոտական աշխատանքները, ներդրումները, տեխնոլոգիաների փոխանցումը, ավանդույթների և որակի պահպանությունը, բարեխիղճ մրցակցությունը և քաղաքացիներին կեղծ և հենական արտադրանքից պաշտպանելը:

Հայաստանում ՄՍ իրավունքների համակարգի հեռանկարային զարգացումը ենթադրում է արվեստի, գիտահետազոտական աշխատանքների, բարեխիղճ մրցակցության և օրինական արտադրված ապրանքների վաճառքի համար արդյունավետ միջավայրի ստեղծումն ի նպաստ ՀՀ քաղաքացիների շահերի, անվտանգության և բարգավաճման:

6. ՄՍ իրավունքների համակարգի ներկա վիճակը Հայաստանի Հանրապետությունում

6.1 Օրենսդրական դաշտը

Հայաստանի Հանրապետությունն իր ազգային օրենսդրությունում բարեփոխումներ է իրականացրել ՄՍ իրավունքների գրանցման, ձեռք բերման և կիրարկման մասով՝

մոտարկելով այն ԵՄ օրենսդրությանը, համապատասխանեցնելով իր տնտեսական և առևտրային իրականությանը և Առևտրի համաշխարհային կազմակերպության պահանջների համաձայն ստանձնած պարտավորություններին: Մտավոր սեփականության իրավունքները կարգավորվում են ազգային օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

6.2 Ազգային օրենսդրությունը

ՀՀ-ԵՄ ԵՀՔ գործողությունների ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետությունը մեծ ուշադրություն է դարձնում իր ազգային օրենսդրության մոտարկմանը ԵՄ ստանդարտներին: Մասնավորապես՝ ՀՀ-ն իր օրենսդրության մեջ ընդգրկել է ՄՍ իրավունքների հիմնական դրույթներն ու ուղղությունները, իսկ ներկայումս փոփոխում է որոշ օրենքներ ԵՄ ստանդարտներին լիովին համապատասխանեցնելու համար:

ՄՍ ազգային օրենսդրությունը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով.

- Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգիրք (10-րդ Գլուխ, 63-րդ մաս, 1100-1183 հոդվածներ),
- «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (նախատեսվում է փոփոխություն 2011 թ.-ին և նպատակ ունի հստակեցնել հեղինակային իրավունքը կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների հավատարմագրման գործընթացը),
- «Ապրանքային նշանների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ուժի մեջ է մտել 2010 թ. հուլիսին և լիովին համապատասխանում է ԵՄ չափանիշներին),
- «Աշխարհագրական նշումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ուժի մեջ է մտել 2010 թ. հուլիսին և լիովին համապատասխանում է ԵՄ չափանիշներին),
- «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք (ներկայումս վերանայման փուլում է, նպատակն է՝ ընդգրկել բիոտեխնոլոգիական գյուտերին և դեղագործությանը վերաբերող դրույթները, վերանայել օգտակար մոդելների արտոնագրաունակության պայմաններն ու համարժեք արտոնագրերի տրման գործընթացը և այլն),
- «Ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության» մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
- Հայաստանի Հանրապետության Քրեական օրենսգիրք (հոդվածներ 158, 159, 197, 199, 195, 212, 208, 209, 210, 211),
- Հայաստանի Հանրապետության Մաքսային օրենսգիրք (14-րդ բաժին),
- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
- «Հսկիչ նշանների (դրոշմապիտակների) միջոցով տեսաձայնային մազնիսական կրիչների պարտադիր դրոշմավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

6.3 ՀՀ միջազգային պայմանագրերը

ՀՀ-ն անդամակցում է ՄՍ բնագավառին վերաբերող միջազգային պայմանագրերի մեծ մասին (Փարիզյան, Բեռնի, Հռոմի, Ժնևի և Բրյուսելի կոնվենցիաները, Մադրիդյան համաձայնագիրը, Բուդապեշտի պայմանագիրը, Արտոնագրային համագործակցության մասին պայմանագիրը, Ապրանքային նշանների, գյուտերի, և արդյունաբերական նմուշների դասակարգմանը վերաբերող Նիցայի, Ստրասբուրգի և Լոկառնոյի համաձայնագրերը, ՄՍՀԿ հեղինակային իրավունքի մասին պայմանագիրը և ՄՍՀԿ կատարումների և հնչյունագրերի մասին պայմանագիրը, ԹԻՓՍ(TRIPS) համաձայնագիրը և այլն):

6.4 Ինստիտուցիոնալ կառուցվածքը

6.4.1 ՀՀ ԷՆ մտավոր սեփականության գործակալությունը

Գործակալությունը արդյունաբերական սեփականության օբյեկտներ (գյուտեր, ապրանքային նշաններ, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ) գրանցող պետական մարմին է: Գործակալությունը գործում է Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության կազմում և պատասխանատու է ՄՍ իրավունքների համապատասխան քաղաքականության իրականացման, ինչպես նաև, արդյունաբերական սեփականության տվյալների անընդհատ համալրվող բազաների վարման, ՄՍ պաշտոնական տեղեկագրերի հրատարակման համար: Գործակալությունն աջակցում է Էկոնոմիկայի նախարարությանը ՄՍ իրավունքների քաղաքականության մշակման, միջազգային համագործակցության և ՄՍ իրավունքներին վերաբերող այլ տեղեկատվության հրապարակման հարցերում: Գործակալությունն ունի բողոքարկման խորհուրդ, որն զբաղվում է արդյունաբերական սեփականության օբյեկտների հայտերի քննարկման ընթացքում առաջացած վեճերի հետ կապված բողոքներով: Էլեկտրոնային տվյալների բազաները, տարեկան հաշվետվությունները, ՄՍ օրենսդրությունը, բողոքարկման խորհրդի որոշումները հասանելի են Գործակալության ինտերնետային կայքի միջոցով, իսկ հայտատուների համար ստեղծված է հայտերի էլեկտրոնային ներկայացման հնարավորություն: ՄՍ գործակալությունը կարևոր դեր է խաղում ՄՍ օրենսդրության կիրարկման համար պատասխանատու բոլոր կառույցների համակարգման գործում: Գործակալությունն ունի 50 աշխատող:

6.4.2 Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողով

Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների շրջանակներում կեղծարարության և հենության դեմ պայքար ծավալելու նպատակով ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվել է Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմում ընդգրկվել են ներկայացուցիչներ պետական, հասարակական և մասնավոր հատվածներից: Հանձնաժողովը ղեկավարում է Էկոնոմիկայի նախարարը:

6.4.3 Իրավակիրարկման այլ մարմիններ և կազմակերպություններ

- Ոստիկանություն ԿՀԴՊԳՎ (ՄՍ ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի վարչություն),
- Մաքսային ծառայություն,
- Դատարաններ.

6.4.4 Անդամակցությունը միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին և դրանց հետ համագործակցությունը

Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է հետևյալ միջազգային կազմակերպություններին.

- Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությանը (WIPO) 1993թ.–ից,
- Եվրասիական արտոնագրային կազմակերպությանը (EAPO) 1995թ.–ից,
- Մաքսային համաշխարհային կազմակերպությանը (WCO),
- Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (WTO) 2003թ.–ից:

ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը համագործակցում է Եվրոպական արտոնագրային կազմակերպության (ԵԱԿ) հետ, ինչպես նաև միջազգային և տարածաշրջանային այլ կազմակերպությունների և կառույցների հետ (ՄՍ գործակալություններ, գերատեսչություններ և այլն):

7. Իրականացվող բարեփոխումները

7.1 Օրենսդրական բարեփոխումներ

Օրենսդրական բարեփոխումները ներառում են հետևյալ բնագավառներն ու գործունեությունը:

7.1.1 Ապրանքային նշաններ

Ապրանքային նշանների օրենսդրության բարեփոխումներն իրականացվել են 2010 թվականին՝ ապրանքային նշանների մասին նոր օրենքի ընդունմամբ, որը լիովին ներդաշնակեցված է ԵՄ ստանդարտներին:

7.1.2 Աշխարհագրական նշումներ և ծագման տեղանուններ

Ապրանքային նշանների մասին նոր օրենքի հետ միասին ընդունվել է նաև «Աշխարհագրական նշումների մասին» նոր օրենք, որով կարգավորվում են աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների և երաշխավորված ավանդական արտադրանքների գրանցման, իրավական պահպանության և օգտագործման հետ

կապված հարաբերությունները, որը նույնպես լիովին համապատասխանեցված է ԵՄ ստանդարտներին:

7.1.3 Գյուտեր և օգտակար մոդելներ

Այս բնագավառում բարեփոխումներն սկսվել են 2008–2009 թվականներին: Սակայն «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ներկայիս օրենքը պետք է ներառի նաև բիոտեխնոլոգիական գյուտերին վերաբերող դրույթները՝ համաձայն 98/44 ԵՄ դիրեկտիվի.

- այսպես կոչված Բոլարի դրույթը, և
- օգտակար մոդելների ակնհայտության նվազագույն ստանդարտը:

7.1.4 Արդյունաբերական նմուշներ

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ներկայիս օրենքը պահպանություն է տրամադրում գրանցված արդյունաբերական նմուշներին, սակայն Կառավարությունը քննարկում է չգրանցված նմուշներին պահպանություն տրամադրելու հնարավորությունը՝ ներկա օրենքը փոփոխելու կամ արդյունաբերական նմուշների մասին նոր օրենքի նախագիծ մշակելու միջոցով:

7.1.5 Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» 2006 թվականի օրենքը ներառում է այս բնագավառում ԵՄ օրենսդրության հիմնական դրույթները: Այնուամենայնիվ, ներկա օրենսդրությունում փոփոխություններ են նախատեսվում համաձայն 98/44 ԵՄ դիրեկտիվի (արբանյակային և մալուխային հեռարձակում), ինչպես նաև կոլեկտիվ հիմունքներով կառավարող կազմակերպությունների համար հավատարմագրման ընթացակարգ սահմանելու նպատակով:

7.1.6 Դեղագործական տվյալների պաշտպանություն, տվյալների նկատմամբ բացառիկ իրավունք

Բարեփոխումները կվերաբերեն դեղագործության օրենսդրության մի շարք հարցերին, երաշխավորելով դրանց լիարժեք մոտարկումը ԵՄ օրենսդրությանը:

7.1.7 Միջազգային պայմանագրեր

ՀՀ կառավարությունը կնախաձեռնի ՄՍ առնչվող ՈՒՊՕՎ (UPOV), ՓԼԹ(PLT) և ՌԹԼԹ(RTLT) պայմանագրերի վավերացման գործընթացը:

7.1.8 ՄՍ իրավակիրառում

ՄՍ իրավունքների կիրարկումը Հայաստանի համար կարևոր է ոչ միայն գործարար համբավի, այլև հարկերի հավաքագրման կարողությունը մեծացնելու և Հայաստանի բնակչության առողջությանն ու ապահովությանը վնաս հասցնող ռիսկերից խուսափելու համար: Այդ պատճառով, իրավակիրարկման մարմինները (ոստիկանությունը, մաքսային ծառայությունը, դատարանները) և էկոնոմիկայի նախարարությունը պետք է համախմբեն իրենց ուժերը իրավախախտումների դեմ պայքարի գործում: Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողովը կարևոր դեր է խաղում իրավակիրարկման ոլորտի բարեփոխումների համակարգման գործում:

ա) Նպատակը

ՄՍ իրավունքների կիրարկման նոր օրենսդրությունը պետք է արդյունավետ իրականացնի ԹՐԻՓՍ(TRIPS) համաձայնագրով նախատեսված նվազագույն ստանդարտները և հետևի ՄՍ իրավակիրարկման ԵՄ ստանդարտներին:

բ) Ներկա օրենսդրությունը

Ներկա օրենսդրությունը ներառում է ՄՍ իրավունքներին վերաբերող հատուկ դրույթներ՝ քրեական, քաղաքացիական և մաքսային օրենսգրքերում և այլ ընդհանուր դրույթներ՝ կապված դատական ընթացակարգերի հետ:

գ) Բարեփոխումները

ՀՀ կառավարությունը կընտրի ՄՍ իրավունքների կիրարկման քաղաքականության բարեփոխումների ամենահարմար, ամենաթափանցիկ և ամենաարդյունավետ ուղին: Կնշակվի ՄՍ իրավակիրարկումը կարգավորող օրենքներում և օրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխությունների նախագիծ և օրենսդրական նախաձեռնությամբ հանդես կգա ՀՀ Ազգային ժողովում:

դ) Հիմնական փոփոխությունները

- իրավակիրարկման մարմինների համար ի պաշտոնե գործելու իրավունքի նախատեսում,
- քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվության նախատեսում,
- իրավապահ մարմինների միջև իրավակիրարկման ներդաշնակ քաղաքականության երաշխավորում,

- բացատրական աշխատանքներ կտարվեն հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավատերերի շրջանում համապատասխան իրավատերերի գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարման կազմակերպությունների հիմնադրման և նրանց միջև համագործակցության ծավալման հարցերով,
- կքննարկի մտավոր սեփականությանն առնչվող գործեր քննող դատարան(ներ)ի մասնագիտացման հարցը,
- մաքսային համակարգերի ՄՍ իրավունքներին վերաբերող գրանցումների ընթացակարգերի ներդրում, կատարելագործում կամ պարզեցում,
- ԹՐԻՓՍ(TRIPS) համաձայնագրի 51-րդ հոդվածի կիրառման ապահովում,
- առգրավված ապրանքների պահեստավորման և ոչնչացման ընթացակարգերի ներդրում և զարգացում (ուղղիչ միջոցառումներ),
- խափանման համարժեք միջոցների ներդրում,
- առգրավված ապրանքների գնահատման և վնասի հաշվարկման ընթացակարգերի ներդրում՝ հիմնվելով միջազգային լավագույն փորձի վրա,
- քրեորեն պատժելի կամ վարչական իրավախախտում որակելու համար համապատասխան տնտեսական շեմի սահմանում,
- սպառողների իրավունքներին և բարեխիղճ մրցակցությանը վերաբերող օրենսդրության համարժեք կիրառման երաշխավորում,
- ինտերնետային և հեռահաղորդակցության այլ ցանցերում մտավոր սեփականության օբյեկտների պահպանության և պաշտպանության լրացուցիչ ընթացակարգերի մշակում և ներդրում:

7.2 Ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում և համագործակցություն ՄՍ իրավակիրարկումն ապահովելու նպատակով

«« Էկոնոմիկայի նախարարությունը որպես քաղաքականություն իրականացնող մարմին և Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողովը, պետք է համակարգող և առաջնորդող դեր ունենան ՄՍ իրավակիրարկման քաղաքականության բարեփոխման հարցում: Ակնկալվում է, որ Հանձնաժողովը իր վրա կվերցնի նաև ՄՍ իրավակիրարկման մարմինների և ՄՍ իրավատերերի միջև համագործակցության երաշխավորման կենտրոնական դերը: Այնուամենայնիվ, ստորև նշված ՄՍ իրավակիրարկման մարմինները հետագա զարգացման և հզորացման կարիք ունեն:

7.2.1 Դատական համակարգ

Հանդես գալ համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ, որպեսզի դատական համակարգը ՄՍ վերաբերյալ վեճերը կենտրոնացնի սահմանափակ թվով դատարաններում՝ սահմանափակ թվով դատավորների ներգրավմամբ: Անհրաժեշտ է

քայլեր ձեռնարկել, որպեսզի ՄՍ վերաբերյալ վեճերի քննարկման հարցում բարձրացվի արբիտրաժի դերը: Քննարկումը կիրականացվի նաև արբիտրաժներում:

7.2.2. Ոստիկանություն

Ոստիկանությունը, իր ՄՍ իրավակիրարկման վարչության միջոցով, պետք է արդյունավետ ստուգայցեր կամ այլ գործողություններ կատարի, ինչպես Երևանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, համագործակցելով մարզային ոստիկանության այլ աշխատակիցների հետ :

7.2.3 Մաքսային ծառայություն

Հայաստանի մաքսային ծառայությունը հաջողությամբ կանխում է առողջության համար վտանգավոր դեղորայքի ներսւբերումը ՀՀ մաքսային տարածք: Այնուամենայնիվ, չնայած ակնկալվում էր, որ մաքսային ծառայությունն այսօր պետք է որ էական դեր ունենար միջազգային մատակարարման ցանցի ապահովության հարցում, կեղծարարության և հենության դեմ գործողություններն առայժմ արդյունավետ չեն:

Հիմնվելով ոստիկանության փորձի վրա, Մաքսային ծառայությունը պետք է ստեղծի ՄՍ իրավունքների ստորաբաժանում՝ ՄՍ իրավունքներին առնչվող ռիսկերի վերլուծության, փակ տեղեկատվության, տվյալների բազայի և մաքսային ծառայության ՄՍ իրավունքների մասնագետների վերապատրաստման աշխատանքների համակարգման նպատակով: ՄՍ իրավունքների ստորաբաժանումը պետք է լինի փորձաքննության գործող կենտրոն, որը կհամագործակցի իրավակիրարկման ազգային մարմինների և ՄՍ իրավատերերի հետ: Այն պետք է նաև պայմաններ ստեղծի ՄՍ իրավատերերի դիմումների հիման վրա վեճերը խաղաղ ճանապարհով լուծելու համար, ինչպես նաև ստանա իրավախախտումների մասին տեղեկատվություն, մասնակցություն ունենա միջազգային համագործակցության մեջ, պահի վիճակագրական տվյալներ, և այլն: Ի լրումն վերը նշվածի, ստորաբաժանումը պետք է ինտերնետային կայքում նկարագրի ՄՍ իրավախախտումների սահմանային նոր ռեժիմը, և այլն:

7.2.4 Փորձագիտական հիմնարկ և ՄՍ իրավունքների այլ փորձագետներ

Առգրավված նմուշները պետք է պահպանվեն և պահեստավորվեն Փորձաքննության ազգային բյուրոյի և (կամ) բնագավառում հմտացած փորձագետների ցանկացած այլ խմբի կողմից՝ իսկության հաստատման և տնտեսական գնահատման նպատակով: Փորձագետները պետք է համագործակցեն ՄՍ իրավատերերի հետ բոլոր այն դեպքերում, երբ վերջիններս կարող են, ի թիվս այլոց, օրինական նմուշներ կամ ցանկացած այլ համարժեք տեղեկատվություն տրամադրել ՄՍ գույքի և (կամ) իրավունքի արժեքի գնահատման աշխատանքներին աջակցելու և գործընթացն արագացնելու նպատակով: Տեղական փորձագետների կողմից կատարված ցանկացած ՄՍ օբյեկտի արժևորման /գնահատման/ հետ անհամաձայնության դեպքում իրավատիրոջ համար որպես ապացույց. հարկ եղած դեպքում, կապահովի արտասահմանյան փորձաքննություն,

պայմանով, որ ՄՍ իրավատերը կերաշխավորի իրավասու փորձագետների կողմից կատարված գնահատման ծախսերի հատուցումը:

7.2.5. ՄՍ իրավունքների տեղեկատվական կենտրոն

Նախատեսելու է նաև ՄՍ իրավունքների տվյալների բազայի ստեղծումը՝ բոլոր գործողությունների, վեճերի, տեղեկատվության և այլնի վերաբերյալ տվյալները պահելու նպատակով:

Մաքսային ծառայությունը, ոստիկանությունը և դատական համակարգը պետք է ունենան և վարեն ՄՍ իրավունքների իրենց տվյալների բազաները, որոնք պետք է դրվեն նաև ՄՍ իրավունքների տեղեկատվական կենտրոնի տվյալների բազայում: Այս կենտրոնը կտեղակայվի ՄՍ գործակալությունում:

7.2.6. Վերապատրաստում ՄՍ իրավունքների ոլորտում

Հայաստանում ՄՍ իրավունքների համակարգի բարեփոխման և կայուն զարգացման կարևորագույն ասպեկտներից մեկը ՄՍ իրավակիրարկման ոլորտի համար պատասխանատու պետական պաշտոնյաների կանոնավոր վերապատրաստումն է: Անհրաժեշտ է հնարավորություններ ստեղծել բարձրացնելու ՄՍ իրավակիրարկման ոլորտի պատասխանատու աշխատակիցների (մաքսային ծառայողներ, դատավորներ, ոստիկանություն)՝ ՄՍ իրավունքների մասին իրազեկության մակարդակը: Ժամանակի ընթացքում Հայաստանի իրավակիրարկման մարմինները պետք է ունենան լրիվ համակարգված ՄՍ իրավունքների տվյալների բազա, հրապարակեն տարեկան հաշվետվություններ, մշակեն վեճերի կարգավորման այլընտրանքային մեխանիզմ, համագործակցեն իրավակիրարկման միջազգային կազմակերպությունների հետ և հասնեն ԵՄ 2004/48 դիրեկտիվի դրույթների հետ լիարժեք ներդաշնակության: Այնուամենայնիվ, ԵՄ իրավակիրարկման համակարգին համարժեք համակարգ ունենալու համար անհրաժեշտ է նաև մի քանի տարի շարունակական աշխատանքներ տանել ՄՍ իրավակիրարկման իրազեկման մակարդակի բարձրացման ուղղությամբ:

7.3 ՄՍ իրավունքների իրազեկման մակարդակի բարձրացման գործունեություն և շահագրգիռ կողմերի վերապատրաստում

ՄՍ իրավախախտումների ամենաբարձր մակարդակը այն երկրներում է, որտեղ շահագրգիռ կողմերը և հանրությունն ընդհանրապես իրազեկված չեն ՄՍ իրավունքների

մասին: Իրազեկման ցածր մակարդակը հենության դեմ ուղղված միջոցառումների հաջողության համար դժվար հաղթահարելի խոչընդոտ է: Հայաստանն այն երկրներից է, որտեղ ՄՍ իրավունքների մասին իրազեկման մակարդակը ցածր է ոչ միայն իրավակիրարկման մարմինների աշխատակիցների մոտ, այլև իրավատերերի և ընդհանրապես հանրության մոտ, մասնավորապես՝ հենության և կեղծարարության բնագավառներում:

ՄՍ իրավունքների բնագավառում հանրության իրազեկման մակարդակի բարձրացումը նախատեսվում է որպես իրականացվելիք առաջնահերթ նպատակ: Կկազմակերպվեն ՄՍ իրավունքների բնագավառում հենության և կեղծարարության մասին իրազեկման սեմինարներ, ինչպես նաև կատեղծվեն և կտարածվեն համապատասխան բրոշյուրներ, տեսանյութեր և այլ տեղեկատվական նյութեր: Բացի այդ, ակնկալվող հատուկ արդյունքը պետք է լինի ՄՍ իրավունքների մասին հանրության իրազեկման բարձրացումը և կեղծված և հենական ապրանքների նկատմամբ հասարակության մեջ բացասական վերաբերմունքի ձևավորումը:

ՄՍ իրավունքների մասին իրազեկման բարձրացման վերաբերյալ Գործողությունների ծրագրում նշված հիմնական գործողություններն են.

- մեծացնել հանրության իրազեկմանն ուղղված աշխատանքների ծավալը, որը կփոխի հանրության մոտեցումը կեղծված և հենական ապրանքների նկատմամբ (իրականացնող մարմիններ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ ոստիկանություն),
- ապահովել փորձագետների մասնագիտական ունակությունների հետևողական բարձրացումը (իրականացնող մարմին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն),
- կատարել շուկայի կանոնավոր վերլուծություն՝ կեղծված և հենական ապրանքների շրջանառության և վնասի ծավալները որոշելու նպատակով (կատարող մարմին՝ ՀՀ ոստիկանություն),
- ձեռնարկել քայլեր դատաիրավական համակարգի և մաքսային ծառայությունների համապատասխան աշխատակիցների գիտելիքների խորացման ուղղությամբ (կատարող մարմին՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն):

Համաձայն ԵՄ ռազմավարության (2005/C 129/03) առաջարկությունների պետք է իրականացվի օգտագործողների իրազեկման մակարդակի բարձրացում հետևյալ միջոցներով.

- ՄՍ իրավունքներից բխող օգուտների լուսաբանում՝ ստեղծագործական աշխատանքների, ներդրումների, տեխնոլոգիաների փոխանցման, ավանդական գիտելիքների և որակի պահպանության նկատառումներով,
- տեղեկատվություն ՄՍ իրավախախտումների դեպքում հասարակության առողջությանը, անվտանգությանը, սպառողների պաշտպանությանը հասցնող վնասների մասին:

Ակնհայտ է, որ ՄՍ իրավունքների վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացումը և վերապատրաստումները շարունակական գործողություններ են, որոնց արդյունքները դժվար գնահատելի են, և որ իրազեկումը սովորաբար երկարաժամկետ գործընթաց է:

7.4 Անհետաձգելի գործողություններ

Գործող օրենսդրությանը համապատասխան պետական և մասնավոր հատվածների համագործակցությամբ պետք է ձեռնարկվեն սահմանային և ներքին շուկային վերաբերող որոշ անհապաղ գործողություններ, որոնց արդյունքները պետք է լուսաբանվեն՝ իրազեկման մակարդակի բարձրացման և ՄՍ իրավատերերին ու իրավախախտներին ծանուցելու նպատակով:

7.5 Ձեռնարկվելիք հիմնական գործողությունները

Անհրաժեշտ է բարելավել և կիրարկել ՄՍ իրավունքների մասին օրենսդրությունը, մասնավորապես՝ հենության և կեղծարարության դեմ պայքարի առումով: Այդ նպատակով իրականացնել հետևյալ գործողությունները.

- ավարտել ՄՍ իրավունքներին վերաբերող օրենսդրության բարելավումը,
- հզորացնել իրավակիրարկման համար պատասխանատու մարմինների կարողությունները,
- երաշխավորել իրավատերերի միջև արդյունավետ երկխոսություն, ինչպես նախատեսված է ԵՆՀ Գործողությունների ծրագրով:

7.6 Բարեփոխումների մոնիտորինգ

ՄՍ իրավունքների բարեփոխումների մոնիտորինգը կիրականացվի Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողովի և ԽՀԱԱՀ բանակցային աշխատանքային խմբի կողմից:

8. Բարեփոխումների գործողությունների ծրագիր

8.1. Ուղղությունները

Վերը նշվածի համաձայն, Հայաստանի ՄՍ իրավունքների համակարգի բարեփոխումը կընթանա հետևյալ երեք ուղղություններով.

Ուղղություն 1՝ Օրենսդրական բարեփոխում

Ուղղություն 2՝ Ինստիտուցիոնալ բարեփոխում (ներառյալ ՄՍ իրավակիրարկման գործողություններ)

Ուղղություն 3՝ ՄՍ իրավակիրարկման վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում (ներառյալ շահագրգիռ կողմերի աշխատողների կամ մասնագետների վերապատրաստում):

8.2. Ուղղությունների փուլերը և նպատակակետերը

Ուղղություն 1

1–ին ուղղության բարեփոխումը բաղկացած է հետևյալ երեք փուլերից.

Փուլ 1՝ Եվրահանձնաժողովի կողմից ընդունված օրենսդրությանը մոտարկված օրենսդրության ընդունում (2011-2012թթ.)

Նպատակակետ 1՝ Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների, գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների և ծագման տեղանունների պահպանության ոլորտներում լիովին մոտարկված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունում:

Նպատակակետ 2՝ Շահագրգիռ կողմերի տեղեկացվածության ապահովում այդ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին:

Փուլ 2՝ Օրենքների, ենթաօրենսդրական ակտերի և դրանց կիրառման գործընթացի կատարելագործում:

Ուղղություն 2

2-րդ ուղղության բարեփոխումը բաղկացած է չորս փուլերից (1-ին և 2-րդ փուլերը կարող են համընկնել)։

Փուլ 1՝ Կարճաժամկետ գործողություններ գործող օրենսդրության առնչությամբ (2011-2012):

Նպատակակետ 1՝ Պետական հատվածի կողմից լիցենզիոն ծրագրային արտադրանքի օգտագործման ապահովում:

Նպատակակետ 2՝ Մաքսային ծառայությունը և ոստիկանությունը համագործակցելով ՄՍ իրավատերերի հետ պետք է առգրավեն ապօրինի ծրագրային արտադրանքը և ՄՍ այլ օբյեկտները, թե՛ սահմանի վրա և, թե՛ ներքին շուկայում: Արդյունքները պետք է ՋԼՄ-ների միջոցով հրապարակվեն հանրության և գործարար հատվածի իրազեկման համար:

Փուլ 2՝ Իրավակիրարկման օրենսդրության արմատական բարեփոխում (2011-2012)

Նպատակակետ 1՝ ԵՄ-Հայաստան ԽՀԱԱՀ հենքային փաստաթղթի յուրաքանչյուր պահանջին համապատասխանող իրավակիրարկման օրենսդրության առկայություն:

Նպատակակետ 2՝ Եվրահանձնաժողովի կողմից ընդունված օրենսդրությանը մոտարկված օրենսդրության ընդունում և շահագրգիռ կողմերի տեղեկացվածություն այդ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին:

Փուլ 3՝ Իրավակիրարկման մարմինների ինստիտուցիոնալ բարեփոխումներ (2011-2012)։

Նպատակակետ 1՝ Եվրահանձնաժողովի կողմից ընդունված անհրաժեշտ կառուցվածքային նոր միավորների ստեղծում:

Փուլ 4՝ Դատավորների, ոստիկանության, մաքսային ծառայության աշխատակիցների, պետական հատվածի իրավաբանների համար ուղեցույցների և վերապատրաստման փաստաթղթերի մշակում (որպես կարողությունների հզորացման գործունեության մի մաս)

և սեմինարների ու աշխատաժողովների կազմակերպում պոտենցիալ շահագրգիռ կողմերի համար (2011թ.-ից սկսած և ՄՍ իրավակիրարկման ԹՎինինգ ծրագրից օգտվելով):

Նպատակակետ 1՝ ՄՍ իրավախախտումների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում, վիճակագրության վարում և տարեկան հաշվետվությունների հրատարակում (2012-2015): Սա, այսպես կոչված «Արդյունավետ կիրառման» փուլն է, որը կզարգանա 2012թ.' ՄՍ իրավակիրարկման ԹՎինինգ ծրագրի իրականացման ընթացքում:

Ուղղություն 3

3-րդ ուղղության բարեփոխումը, ի թիվս այլոց, բաղկացած է նաև հետևյալ փուլերից.

Փուլ 1՝ Վերապատրաստումների, սեմինարների և աշխատաժողովների կազմակերպում և անցկացում պոտենցիալ շահագրգիռ կողմերի համար (2011թ.-ից սկսած):

Փուլ 2՝ Իրազեկման մակարդակի բարձրացման սեմինարներ ՄՍ շահագրգիռ կողմերի և հանրության համար (2011թ.-ից սկսած),

Փուլ 3՝ Մասնավոր և պետական հատվածների շահագրգիռ կողմերի վերապատրաստում (2011 թ.-ից սկսած),

Փուլ 4՝ Վերապատրաստողների վերապատրաստում (2011 թ.-ից սկսած),

Փուլ 5՝ ՄՍ տեղեկատվական կենտրոնի ստեղծում (2012-2013թթ.):

9. Ռիսկերը, ներգրավվածությունը և հաջողության ցուցանիշները

Առաջարկվող ռազմավարությունը հիմնված է հետևյալի վրա.

- ՀՀ կառավարությունը կիրառման ամբողջ ժամանակահատվածում կպահպանի քաղաքական աջակցության սկզբունքը:
- ՀՀ կառավարությունը դոնորների աջակցությամբ կձևավորի անհրաժեշտ ռեսուրսներ: ՄՍ իրավատերերը պետք է համագործակցեն այդ գործընթացում:
- Ռազմավարության հաջողությունը, ի թիվս այլոց, կախված է նաև հետևյալ հանգամանքներից՝

1. սույն բարեփոխմանը հակասող խոչընդոտների վերացում,
2. իրավակիրարկման համար պատասխանատու բոլոր մարմինների մասնակցություն գործընթացին,
3. ՄՍ իրավունքների վերաբերյալ իրազեկման մակարդակի բարձրացում հասարակության մեջ,
4. մասնավոր հատվածի շահագրգիռ կողմերի ներգրավում,
5. կեղծարարության և հենության գործունեության՝ հանրության առողջությանը, անվտանգությանը և երկրի վարկին վնասող ռիսկերի ըմբռնում և տեղեկատվության տարածում:

10. Բարեփոխման համար կատարվելիք ծախսերը

Վերը նշված բարեփոխումների արդյունքներին հասնելու համար անհրաժեշտ է ռեսուրսների տեղաբաշխում, մասնավորապես անհրաժեշտ է ընդլայնել իրավակիրարկման որոշ մարմինների կարողությունները: Ծրագրային ապահովման լիցենզիաների ձեռքբերման նպատակով պետական բյուջեում անհրաժեշտ է նախատեսել համապատասխան գումար: Մասնավոր հատվածում օրինական ծրագրերի օգտագործման մակարդակի բարձրացումը կհանգեցնի հարկերի հավաքագրման մակարդակի բարձրացմանը և դրանով կփոխհատուցի օրինական ծրագրային ապահովման համար կատարվող պետական ծախսերը (այս գործընթացի համար պետական հատվածի կազմակերպությունները և խոշոր կազմակերպությունները պետք է առաջնորդեն այս գործընթացը): Այնուամենայնիվ, այս հարցում չեն պահաջվի այնքան մեծ ներդրումներ, որքան այլ բարեփոխումների համար, որոնք պահանջում են սարքավորումներ և հատուկ շինություններ: Ծախսերի մի մասը կարող է կրճատվել ՄՍ իրավատերերի հետ համագործակցության միջոցով:

11. Բարեփոխումների ղեկավարումը, մոնիտորինգը և գնահատումը

Բարեփոխումների գործընթացի բոլոր ուղղությունները պետք է ղեկավարվեն, ենթարկվեն մոնիտորինգի և գնահատվեն Էկոնոմիկայի նախարարության, Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողովի, ԻՀԱԱՀ բանակցային աշխատանքային խմբի և Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության կողմից: Բարեփոխումը պետք է գնահատվի կիսամյակային կտրվածքով, սկսած 2011 թվականից:

12. Եզրակացություն

Սույն ռազմավարությունը Հայաստանում ՄՍ իրավունքների գնահատման մի քանի տարվա աշխատանքի արդյունքն է: Հաշվի են առնված նաև կատարված աշխատանքները, օրինական գործարարությունը, տուրքերի հավաքագրումը, բարեխիղճ մրցակցության խաթարումը և քաղաքացիների առողջությանն ու անվտանգությանը հասցվող վնասները՝, հանցավոր կազմակերպություններին ու դրանց գործունեությունը սնող կեղծարարության և հենության շուրջ աճող միջազգային անհանգստության պարագայում:

Հայաստանի Հանրապետությունը նույնպես հակված է իրականացնելու այս բարեփոխումները, որպեսզի կատարի ԽՀԱԱՀ բանակցությունները սկսելու համար ԵՄ հիմնական պահանջներից մեկին համապատասխանեցումը: Այս նախաձեռնությունը նաև հնարավորություն է ընձեռում խթանելու ժամանակակից շուկայական տնտեսության գլոբալ տնտեսության մեջ մրցունակ լինելու համար պահանջվող բարեփոխումները: Սա կօգնի Հայաստանին ՄՍ դիտարկումների միջազգային ցուցակի ցածր վարկանիշ ունեցող երկրների շարքից դուրս գալուն և դրանով բարձրացնելու իր վարկանիշը: Կձեռնարկվեն կարճաժամկետ գործողություններ անհապաղ և պայմանական շոշափելի արդյունքերի հասնելու համար: Այնուամենայնիվ, երկարաժամկետ և հուսալի գործողությունները, ինչպիսիք իրազեկման մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերն են, չեն կարող անտեսվել: Այս գործունեությունը կարող են իրականացնել պետական և հասարակական հատվածների շահագրգիռ կողմերը միջազգային դոնորների միջոցով: Հասարակության կողմից մտավոր սեփականության նկատմամբ հարգանքի ձևավորմանը հասնելու համար դեռ երկար ճանապարհ կա անցնելու:

Հավելված 2
ՀՀ կառավարության
2011 թվականի N Ա որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Սույն փաստաթուղթը «Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարության» գործողությունների ծրագիրն է: Գործողությունների ծրագիրը կենթարկվի մոնիտորինգի և կիրականացվի Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողովի, ՀՀ էկոնոմիայի նախարարության, Մտավոր սեփականության գործակալության, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի, ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ոստիկանության և այլ մարմիններ կողմից:

No	Գործողություններ	Նպատակները և համառոտ նկարագրությունը	Նախապայմաններ	Ակնկալվող արդյունքները	Պատասխանատու հաստատություն	Վերջնաժամկետ
1.	ՄՍ իրավունքների գրանցման, պաշտպանության և կիրարկման օրենսդրության համապատասխանեցում					
1.1	Ապրանքային նշանների նոր համակարգի ներդրում		Կիրառելի չէ	Ապրանքային նշանների համակարգի համապատասխանեցում միջազգային ստանդարտներին	ՄՍԳ	2010–2011
1.2	Աշխարհագրական նշումների և Ծագման տեղանունների նոր համակարգի ստեղծում		Աշխարհագրական նշումների և Ծագման տեղանունների նոր օրենքի համարժեք կիրառում	Աշխարհագրական նշումների և Ծագման տեղանունների համապատասխանեցում ԵՄ օրենսդրությանը	ԷՆ, ԳՆ և ՄՍԳ	2011–2012
1.3	Աշխարհագրական նշումների և Ծագման տեղանունների նոր դրույթների կիրառում		Կիրառելի չէ	Աշխարհագրական նշումների և Ծագման տեղանունների համապատասխանեցում ԵՄ ստանդարտներին	ԷՆ, ԳՆ և ՄՍԳ	Շարունակական
1.4	Գյուտերի և օգտակար մոդելների օրենսդրության կատարելագործում		Կիրառելի չէ	Ներառել հետևյալ ասպեկտները՝ Կենսատեխնոլոգիական գյուտերի պահպանության դրույթները ԵՄ 98/44 դիրեկտիվի համաձայն, «Բոլարի դրույթներ» և օգտակար մոդելների ակնհայտության նվազագույն ստանդարտներ	ԷՆ և ՄՍԳ	2011

1.5	Գյուտերի և օգտակար մոդելների մասին ժամանակակից օրենքի դրույթների նախագծում		1.4	Գյուտերի և օգտակար մոդելների գրանցում միջազգային ստանդարտներին համապատասխան	ԷՆ և ՄՍԳ	2011-2012
1.6	Արդյունաբերական նմուշների ժամանակակից օրենսդրության կիրառման ենթաօրենսդրական ակտերի մշակում		1.6	Ներառյալ չգրանցված նմուշների պահպանությունը	ԷՆ և ՄՍԳ	2011-2012
1.7	Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օրենսդրության կատարելագործում		Կիրառելի չէ	Մի շարք հարցերի հստակեցում, ներառյալ ԵՄ 93/83/EEC դիրեկտիվին համապատասխանությունը (Արբանյակային և մալուխային): Կոլեկտիվ կազմակերպությունների առումով, բարեփոխումը պետք է լուծի հավատարմագրման հարցը:	ԷՆ և ՄՍԳ	2011-2012
1.8	Դեղորայքի և բույսերի սանիտարիայի տվյալների նկատմամբ բացառիկ իրավունքների մասին համարժեք օրենսդրության մշակում՝ ապահովելով	Տվյալների ների նկատմամբ բացառիկ իրավունքներին համարժեք և հավասարակշռված պաշտպանության	Կիրառելի չէ	Պահպանության բարելավում ԵՄ օրենսդրությանը համապատասխան, ջենտրիկ անվանումների օպտիմալ մուտքագրում	ԱՆ և ԳՆ	2012

	չբացա-հայտելու և վստահու-թյան սկզբունքները:	տրամադրում՝ գաղտնիու-թյան և չբացա-հայտելու առումով				
2.	ՄՍ իրավունքների կիրարկման կարճաժամկետ գործողություններ					
2.1	Պետական կազմակերպությունների կողմից ծրագրային ապահովման լիցենզիաների թարմացում	Պետական կազմակերպությունների կողմից բարեխիղճ պրակտիկայի խորացում	Կառավարության կողմից պարտավորու-թյունների հանձնառություն և համապատասխան բյուջեի ձևավորում	Հայաստանի վարկանիշի բարձրացում, այդ թվում միջազգային կազմակերպությունների առջև, օրինակ ծառայելով հասարակու-թյանը ոչ պետական հատվածի կազմակերպություններին	Պետա-կան կազմակեր-պություն-ներ	2011-2012 Շարունա-կական
3.	ՄՍ իրավակիրարկման գործողություններ՝ օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ					
3.1	ՄՍ իրավունքների օրենսդրության կիրարկում, մասնավորապես համապատասխան պետական մարմիններին ի պաշտոնե գործողություններ իրականացնելու լիազորության վերապահում	ԵՄ ստանդարտ-ների վրա հիմնված նոր կառուցված-քներ, ինչպես նաև ԵՄ 2004/48 կիրարկման դիրեկտիվի դրույթներին համա-պատասխան՝ ՄՍ իրավունքների և 1383/2003	Կիրառելի չէ	ԵՄ ստանդարտներին համապա-տասխանեցված ՄՍ իրավունք-ների ամբողջական օրենսդրության ընդունում: Վերապահել ի պաշտոնե գործողություններ իրականացնելու լիազորություն մաքսային ծառայությունների և ոստիկանության աշխատողներին: Դատարանների կամ դատավորների մասնագիտացում: Առգրավված ապրանքները պահելու, պահպանելու և ոչնչացնելու գործողությունների	Հանձնա-ժողով, ՊԵԿ, Ոստիկան ություն	2012-2013

		կանոնա- կարգին համա- պատասխան մաքսային ծառայություն- ների գործո- ղություններն ընդդեմ ապօրինի գործունեու- թյան և կեղծա- րարության:		կիրառում (ուղղիչ միջոցներ): Արգելանքի համարժեք մեխա- նիզմների ներդրում: Գործողություններ կապված առգրավված ապրանքների գնահատման հետ: Համարժեք տնտեսական շեմի սահմանում քրեորեն պատժելի և վարչական իրավախախտումների համար:		
3.2	Մտավոր սեփա- կանության գոր- ծակալություն	Էլեկտրոնային եղանակով ծառայություն- ների մատուցման բարելավում	Կիրառելի չէ	Էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունների աճ	ՄՍԳ	Շարունա- կական
3.3	Մտավոր սեփա- կանության գործակալություն	SS ծառայու- թյունների բարելավում	Կիրառելի չէ	ՄՍԳ SS համակարգի համապատասխանեցում եվրոպական մտավոր սեփականության կազմակերպությունների ստանդարտներին	ՄՍԳ	2011- 2013 Շարունա- կական
3.4	Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների կոլեկտիվ հիմունքներով	Հեղինակային րիավունքի ոլորտում ներդնել լավագույն փորձերը՝	Կիրառելի չէ	Հոնորարների հավաքման ապա- հովում: Հասարակության մեջ ՄՍ իրավունքների մասին իրազեկ- ման մակարդակի բարձրացում	Հանձնա- ժողով, ԷՆ, ՄՆ, ՄՍԳ	Շարունակա կան

	կառավարման կազմակերպություններ	կոլեկտիվ հիմունքներով կառավարման կազմակերպությունները և այդ ճյուղը զարգացնելու համար				
3.5	Մաքսային ծառայություններ	Սահմանի վրա ապահովել ՄՍ իրավունքների ամբողջական և համարժեք կիրարկում	3.1	ՄՍ իրավատերերի համար արդյունավետ մաքսային գործընթացների ներդրում: ՄՍ իրավունքների ռեգիստրի վարման համար արդյունավետ գործողությունների լիարժեք իրականացում Առգրավված ապրանքների պահեստավորման և ոչնչացման համար համապատասխան հարմարությունների և իրականացման համարժեք ընթացակարգերի ապահովում:	Հանձնա- ժողով, ՊԵԿ	2012 Շարունա- կական
3.6	Ոստիկանություն	ՄՍ իրավունքների ամբողջական և պատշաճ կիրարկման ապահովում	3.1	Ի պաշտոնե գործողություններ իրականացնելու լիազորությունների կիրառում: ՄՍ իրավունքների վերաբերյալ վերապատրաստում: Ոստիկանական տարբեր ծառայությունների համագործակցություն և օժանդակում ոստիկանության ՄՍ վարչությանը: Առգրավված ապրանքների պահեստավորման և ոչնչացման	Հանձնա- ժողով, Ոստիկան ություն	2012-2013

				համար համապատասխան հարմարությունների և դրանց իրականացման համար համարժեք ընթացակարգերի ապահովում:		
3.7	Դատարաններ	Դատավորների մասնագիտական գիտելիքների խորացում ՄՍ իրավունքների հարցում, ՄՍ իրավունքների ն վերաբերող գործերի կենտրոնացում որոշակի դատարաններում	Կիրառելի չէ	Որոշ դատարաններում ՄՍ իրավունքների մասնագիտական որոշակի աստիճանի ապահովում: ՄՍ իրավատերերի վստահության բարձրացում դատարանների նկատմամբ	Հանձնաժողով	2012-2013
3.8	Վիճակագրություն	ՄՍ իրավախախտման վերաբերյալ վիճակագրության վարում	Տվյալների բազայի ստեղծում և վարում	Գրանցումների, իրավախախտման դեպքերի վերաբերյալ տվյալների հավաքում, վերլուծությունների և հաշվետվությունների պատրաստում:	ՄՍԳ, Ոստիկանություն, ՊԵԿ	2012 Շարունակական
4	<i>ՄՍ իրավունքների մասին իրազեկության մակարդակի բարձրացում</i>					
4.1	Հանրության իրազեկում	ՄՍ իրավունքների կարևորության մասին իրազեկում և հարգալից	Կիրառելի չէ	Կեղծ և հենական ապրանքների սպառման մակարդակի նվազում:	ԷՆ, ՄՍԳ	Շարունակական

		վերաբերմունք ՄՍ իրավունքների նկատմամբ				
4.2	Վերապատրաս- տողների վերապատրաստում	ՄՍ իրավունքների մասնագետ- ների թիմի ստեղծում	Կիրառելի չէ	Իրազեկ մասնագետների քանակական աճ	Հանձնա- ժողով, ՄՍԳ	2012 Շարունա- կական

ՀԵՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

1. ԵՄ–Հայաստան Գործընկերության և համագործակցության համաձայնագիր (ԳՀՀ)

Նկարագրություն. ԳՀՀ –ն ուժի մեջ է մտել 1999թ. –ին, որի 6-րդ գլուխը վերաբերում է ՄՍ իրավունքների պաշտպանության այն դրույթներին, որոնք կոչված են պաշտպանելու գործարարությունը և ներդրումները: ԳՀՀ – ի առաջին մանդատը Հայաստանի համար ներառում է Հայաստանի անդամակցումը ՄՍ իրավունքների հիմնական բազմակողմանի կոնվենցիաներին: Այս գործընթացն իրականացված է: ՄՍ իրավունքներին վերաբերող երկրորդ մանդատը ապահովում է ԵՄ –ին համարժեք պահպանության մակարդակ, ներառյալ այն օրենքների խիստ պահպանությունը, որոնք ներկայումս ընդունված են:

2. 2006թ. ընդունված ԵՀՔ գործողությունների ծրագիրը և 2009-2011թթ. գործողությունների ցանկը

Նկարագրություն. ԵՄ – Հայաստան ԵՀՔ Գործողությունների ծրագիրն այս գործընթացում Հայաստանի առաջին քայլն է և ԵՄ –ն ավելի ու ավելի զարգացնում է քաղաքական համագործակցությունը և տնտեսական ինտեգրումը: Գործողությունների ծրագիրը քաղաքական փաստաթուղթ է, որը պլանավորում է համագործակցության ռազմավարական նպատակները Հայաստանի և ԵՄ–ի միջև հինգ տարի ժամանակահատվածում: Դրա իրագործումը կօգնի իրականացնել Գործընկերության և Համագործակցության համաձայնագրի դրույթները, կապեր կստեղծի նոր քննազավառներում, և կօժանդակի ու նեցուկ կհանդիսանա Հայաստանին եվրոպական տնտեսության և հասարակական կառուցվածքներին հետագա ինտեգրման համար:

Գործողությունների ծրագրի իրագործումը նպատակ ունի նշանակալի կերպով մոտարկելու Հայաստանի օրենսդրությունը, նորմերը և ստանդարտները ԵՄ օրենսդրությանը, նորմերին և ստանդարտներին: Այս ենթատեքստում այն ամուր հիմքեր կստեղծի հետագա տնտեսական ինտեգրման համար, որը հիմնված է տնտեսությանը և առևտրին վերաբերող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի ընդունման և իրագործման վրա, ներառյալ ՄՍ իրավունքների օրենքները և ենթաօրենսդրական ակտերը՝ առևտրի բարելավման հնարավորությունները, ներդրումները և զարգացումը խթանելու պոտենցիալով:

Առևտրային հարաբերություններին, շուկային և օրենսդրական բարեփոխումներին վերաբերող ծրագրի գործողություններից մեկը նպատակաուղղված է ՄՍ իրավունքներին¹, ներառյալ մաքսային ծառայությունների վերահսկողությունը հենական կամ կեղծված ապրանքների ներմուծման և արտահանման նկատմամբ:

¹ Մասնավորապես՝

- Երաշխավորել ՄՍ իրավունքների համապատասխանությունը ԳՀՀ պարտավորություններին և ԹՐԻՓՍ(TRIPS) համաձայնագրի պահանջներին, ինչպես նաև դրանց արդյունավետ կիրարկումը.
- Երաշխավորել դատական համակարգի պատշաճ գործունեությունը՝ ապահովելու համար արդարադատության հասանելիությունը իրավատերերին, ինչպես նաև պատժամիջոցների արդյունավետ կիրառումը.
- Համախմբել համապատասխան ինստիտուցիոնալ կառուցվածքները, այդ թվում՝ արդյունաբերական սեփականության, հեղինակային իրավունքի պահպանության կազմակերպությունները և կոլեկտիվ հիմունքներով կառավարման կազմակերպությունները: Ընդլայնել երրորդ երկրների համապատասխան կազմակերպությունների և արդյունաբերական ընկերությունների հետ համագործակցության շրջանակները,
- Ընդլայնել իրավակիրարկման մարմինների ռեսուրսները, ներառյալ դատական համակարգը,
- Բարելավել ԳՀՀ 42.2 հոդվածով սահմանված համապատասխան կոնվենցիաների կիրարկումը,

Ձարգացնել ՄՍ բնագավառում հանցագործությունների դեմ պայքարի ՀՀ և ԵՄ իրավակիրարկման մարմինների միջև համագործակցությունը:

3. Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանության հայեցակարգ (ՀՀ կառավարության արձանագրային որոշում հ. 14, ապրիլի 2, 2009թ.)

Նկարագրություն. Որպես ՀՀ կառավարության կողմից ՄՍ իրավունքների համակարգի զարգացման կարևորության ճանաչման գործընթացի և կառավարության կողմից բարեփոխումների կատարման հանձնառության մի մաս, 2009թ. ապրիլի 2-ին ընդունվեց Մտավոր սեփականության հուսալի և արդյունավետ պահպանության հայեցակարգը և այդ փաստաթղթի դրույթների կատարման նպատակով 2009թ. օգոստոսին ՀՀ էկոնոմիկայի նախարարի ղեկավարությամբ ստեղծվեց Հայաստանում կեղծարարության և հենության դեմ պայքարին օժանդակող միջգերատեսչական հանձնաժողով, որը բաղկացած է պետական մարմինների (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՄՍ գործակալություն, ՀՀ ոստիկանության ԿՀԴՊԳՎ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, դատական համակարգ) և մասնավոր հատվածի ու ՀԿ-ների ներկայացուցիչներից:

Ավելին, 2010թ. Կառավարությունն ստեղծել է ՄՍ իրավունքների աշխատանքային խումբ՝ ԵՄ-ի հետ ԽՀԱԱՀ բանակցությունների աջակցության նպատակով: Կառավարությունը արժևորում է ԵՄ Խորհրդատվական խմբի հատուկ մշակած քաղաքականության խորհրդատվությունը, որը ստեղծվել է 2009թ. ապրիլին՝ ՀՀ կառավարության կողմից նախաձեռնված քաղաքական և տնտեսական բարեփոխումների աջակցելու նպատակով:

4. ՄՍ իրավունքների կիրարկման թվինինգ ծրագիր, հունիս, 2010

Նախատեսվել է ունենալ ՄՍ իրավունքների կիրարկման համակարգի թվինինգ ծրագիր, որը մշակվում է որպես ինստիտուցիոնալ կարողությունների գործնական հզորացման գործիք՝ պետական կառավարման համարժեք կառույցների (նախարարություններ, պետական կազմակերպություններ, և այլն) հետ համագործակցությամբ՝ ԵՄ ստանդարտներին մոտարկման գործընթացի հեշտացման նպատակով:

Նմանատիպ ԵՄ օժանդակության գործիքի գործարկումը կսկսվի 2012թ., այն բանից հետո, երբ Հայաստանի Հանրապետությունն արդեն նախաձեռնած կլինի ՄՍ իրավունքների պաշտպանության իրավական համակարգը միջազգային դրույթներին համապատասխանեցնելու գործընթացը՝ վերը նշված ԵՀԲ գործողությունների ծրագրի և ԳՀՀ դրույթների համապատասխան: Գլխավոր նպատակն է՝ Հայաստանի ՄՍ իրավակիրարկման համար պատասխանատու մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման միջոցով ԵՄ ՄՍ իրավունքների պաշտպանությանը համարժեք պաշտպանություն ունենալը:

5. Հայաստանի ներքին շուկայում կեղծարարության և հենության մակարդակի ուսումնասիրություն, AEPLAC-ICHD, 2010թ.

6. 2009թ. Հայաստանի առաջընթացի հաշվետվություն. ԵՀՔ իրականացման համար պատասխանատու Եվրոպական պառլամենտի և Խորհրդի հազորդագրություն, Բրյուսել, 12/05/2010, SEC(2010) 516

7. Եվրոպական հանձնաժողովի առևտրի ոլորտի փաստահավաք առաքելություն (2009թ. փետրվար)

8. Հայաստանի առևտրային քաղաքականության առաջին ստուգում ԱՀԿ-քարտուղարության կողմից, 2010թ.

9. Մտավոր սեփականության գործակալության և Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչների հանդիպումը ՄՍ իրավունքների հարցերով. Առևտրի, տնտեսության և հարակից հարցերով ԵՄ-Հայաստան ենթահանձնաժողով (Երևան, 16-ը հունիսի 2010թ.)

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարությունը (այսուհետ՝ ռազմավարություն) առնչվում է մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերին, որպես ՀՀ առևտրային և արդյունաբերական ընդհանուր քաղաքականության մաս: Այդ պատճառով, սույն ռազմավարությունը մշակվել է Հայաստանի Հանրապետությունում տնտեսությունը բարելավելու, ստեղծագործական և ներդրումային բարենպաստ միջավայր ստեղծելու, ինչպես նաև Եվրամիության և Հայաստանի Հանրապետության միջև «Խորը և համապարփակ ազատ առևտրի համաձայնագրի» (ԽՀԱԱՀ) ստորագրման գործընթացը հեշտացնելու նպատակով: Ռազմավարությունում հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության իրավունքների համակարգի ներկա վիճակը, շահագրգիռ կողմերի և Եվրոպական հանձնաժողովի առաջարկություններն ու հուզող խնդիրները, ինչպես նաև այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության ձեռնարկած գործողությունները:

Եվ՝ Հայաստանին, և՛ Եվրամիությանն անհրաժեշտ են մտավոր սեփականության իրավունքների պահպանությունն ու պաշտպանությունը համընդհանուր տնտեսությունում մրցակցելու համար:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Ներկա օրենսդրությունը ներառում է մտավոր սեփականության իրավունքներին վերաբերող հատուկ դրույթներ՝ քրեական, քաղաքացիական և մաքսային օրենսգրքերում և այլ ընդհանուր դրույթներ՝ կապված դատական ընթացակարգերի հետ:

Եվ՝ Եվրամիության, և՛ Հայաստանի երկարատև զարգացումն ու աշխատանքը խոչընդոտվում են, երբ մեր մտքերը, բրենդներն ու արտադրանքը կեղծվում են: Կեղծ դեղորայքը, խաղալիքները, պահեստամասերը և սննդամթերքը հաճախ վտանգում են մեր քաղաքացիների անվտանգությունն ու առողջությունը: Ներկայիս մտավոր սեփականության իրավունքի պաշտպանության մակարդակը բավարար չէ կեղծարարությունը և հենությունը լիովին բացառելու համար: Հայաստանի կառավարությունը գիտակցում է, որ Հայաստանում դեռ կան մի շարք խնդիրներ կապված մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության հետ: Այս խնդիրներից են կեղծարարության և հենության մակարդակի նվազեցումը, ազգային օրենսդրության մոտարկումը ԵՄ չափանիշներին, մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության օրենսդրության արդյունավետ կիրարկման ապահովումը,

մասնավորապես՝ հենության և կեղծարարության դեմ պաշտպանության մասով, բարձրացնելով իրավապահ մարմինների (ուստիկանություն, դատարաններ, մաքսային ծառայություն և այլն) գործունեության արդյունավետությունը, մտավոր սեփականության իրավունքների քաղակականության և կիրարկման համար պատասխանատու պետական մարմինների և լայն հասարակության մոտ իրազեկման մակարդակի բարձրացումը: Սակայն առկա խնդիրները չեն սահմանափակվում միայն թվարկվածներով:

3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր ազգային օրենսդրությունում բարեփոխումներ է իրականացնում մտավոր սեփականության իրավունքների գրանցման, ձեռք բերման և կիրարկման մասով՝ մոտարկելով այն ԵՄ օրենսդրությանը, համապատասխանեցնելով իր տնտեսական և առևտրային իրականությանը և Առևտրի համաշխարհային կազմակերպության պահանջների համաձայն ստանձնած պարտավորություններին:

Մտավոր սեփականության իրավունքները կարգավորվում են ազգային օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով և ՀՀ միջազգային պայմանագրերով:

4. Կարգավորման նպատակը և բնույթը

Մտավոր սեփականության իրավունքների կիրարկման նոր օրենսդրությունը պետք է արդյունավետ իրականացնի ԹՐԻՓՍ(TRIPS) համաձայնագրով նախատեսված նվազագույն ստանդարտները և հետևի մտավոր սեփականության իրավակիրարկման ԵՄ ստանդարտներին (մտավոր սեփականության իրավունքների կիրարկման դիրեկտիվ 2004/48՝ Եվրամիության ներսում և մտավոր սեփականության իրավունքների կիրարկման ԵՄ կանոնակարգը՝ ԵՄ սահմաններում):

Էկոնոմիկայի նախարարությունը կարևոր դեր կխաղա Մտավոր սեփականության գործակալության բարեփոխումների գործում:

Օրենսդրական բարեփոխումները ներառում են հետևյալ բնագավառներն ու գործունեությունը.

Ապրանքային նշաններ

Աշխարհագրական նշումներ և ծագման տեղանուններ

Գյուտեր և օգտակար մոդելներ

Արդյունաբերական նմուշներ

Հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ

Դեղագործական տվյալների պաշտպանություն, տվյալների բացառիկություն

Բույսերի տեսակներ

Միջազգային պայմանագրեր

Մտավոր սեփականության իրավակիրարկումը (առանձին օրենք կամ փոփոխություններ բազմաթիվ գործող օրենքներում, ենթաօրենսդրական ակտերում)

5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

ԵՄ փորձագիտական խումբ, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

6. Ակնկալվող արդյունքը

Նոր օրենք կամ փոփոխություններ գործող օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում (2011-2012թթ.)՝ լիովին մոտարկված օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր հետևյալ ոլորտներում՝ գյուտեր, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, ապրանքային նշաններ, աշխարհագրական նշումներ և ծագման տեղանուններ, տվյալների բացառիկություն, հեղինակային իրավունք և հարակից իրավունքներ:

Մոտարկված օրենսդրության ընդունում Եվրահանձնաժողովի կողմից և շահագրգիռ կողմերի տեղեկացվածություն այդ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին:

Ենթաօրենսդրական ակտերի և (կամ) ուղեցույցների կիրառման գործընթացի զարգացում:

ԵՄ-Հայաստան ԻՀԱԱՀ հենքային փաստաթղթի յուրաքանչյուր պահանջին համապատասխանող իրավակիրարկման օրենսդրության առկայություն:

Եվրահանձնաժողովի կողմից մոտարկված օրենսդրության ընդունում և շահագրգիռ կողմերի տեղեկացվածություն այդ օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մասին:

Իրավակիրարկման մարմինների ինստիտուցիոնալ բարեփոխումներ (2011-2012), որոնց նպատակն է Եվրահանձնաժողովի կողմից ընդունված՝ գործող և ճանաչված կառուցվածքային նոր միավորների արդյունավետ ստեղծում (մինչև Թվինինգ ծրագրի սկիզբը):

Մտավոր սեփականության իրավախախտումների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծում, վիճակագրության վարում և տարեկան հաշվետվության հրատարակում:

Մտավոր սեփականության տեղեկատվական կենտրոնի ստեղծում.

Մտավոր սեփականության բնագավառի վերապատրաստողների վերապատրաստում.

Իրազեկման մակարդակի բարձրացման սեմինարներ մտավոր սեփականության շահագրգիռ կողմերի և ընդհանուր հանրության համար (2011թ.-ից սկսած).

Մասնավոր և պետական հատվածների շահագրգիռ կողմերի վերապատրաստում, ներառյալ դատավորների:

7. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՅՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՅՄԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔԻ ԲԱՅԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացված իրավական ակտերում փոփոխությունների ընդունումից հետո պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսում, այդ իսկ պատճառով բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման վերաբերյալ տեղեկանք չի ներկայացվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԻ ՆԱԽԱԳԾՄԱՆԸ ԵՎ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը

Նախագծի վերաբերյալ ս.թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպվել է քննարկում բիզնեսի ներկայացուցիչների հետ, որի արդյունքների հիման վրա լրամշակվելուց հետո ռազմավարությունը տեղադրվել է ՀՀ էկոնոմիկայի կայքում:

2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և(կամ) քննարկումներին

Ռազմավարության վերաբերյալ ս.թ. դեկտեմբերի 10-ին քննարկումներ են կայացել բիզնեսի ներկայացուցիչների հետ:

3. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌԽՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և(կամ) լրացումների անհրաժեշտությունը.

Անհրաժեշտ է փոփոխություններ կատարել 2008թ. հունիսի 10-ի «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» և 2006թ. հունիսի 15-ի «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքներում:

2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը

Հայաստանի Հանրապետությունը արդեն իսկ անդակամակցում է ԹՐԻՓՍ(TRIPS) համաձայնագրին և նախատեսում է միանալ նաև մտավոր սեփականության բնագավառին առնչվող հետևյալ պայմանագրերին՝ ՈՒՊՕՎ (UPOV), ՓԼԹ(PLT) և ՌԹԼԹ(RTLT):

3. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարությանը հավանություն տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ շահագրգիռ մարմինների առարկությունների և առաջարկությունների

<i>h/h</i>	<i>Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը</i>	<i>Առարկության. առաջարկության բովանդակությունը</i>	<i>Եզրակացություն</i>	<i>Կարարված փոփոխությունները</i>
	1	2	3	4
1.	ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն 2011-01-12, թիվ 11/5	Առաջարկություններ և առարկություններ չկան		
2.	ՀՀ ֆինանսների նախարարություն 2011-01-20, թիվ 1/4.4-3/323-11	Առաջարկություններ և առարկություններ չկան		
3.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն 2010-12-29, թիվ 01/14/13490-10	Առաջարկություններ և առարկություններ չկան		
4.	ՀՀ մշակույթի նախարարություն 2011-01-21, թիվ 05/5.1/134-11	Առաջարկություններ և առարկություններ չկան		
5.	ՀՀ սփյուռքի նախարարություն 2010-12-29, թիվ 03/17.1/3012-10	Առաջարկություններ և առարկություններ չկան		
6.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն 2010-12-29, թիվ ԳԱ/6186-10	Առաջարկություններ և առարկություններ չկան		
7.	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական	Առաջարկություններ և առարկություններ չկան		

	հանձնաժողով 2011-01-11, թիվ ԱՇ-15			
8.	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե 2011-01-19, թիվ ԱԱ-1/3-2/188-11	<p>1. Հավելված 1-ի 6.2 կետում “Մաքսային օրենսգիրք (14-րդ մաս)”-ը բառերը փոխարինել “Մաքսային օրենսգիրք (14-րդ բաժին)” բառերով:</p> <p>2. Խմբագրել հավելված 1-ի 7.1.2 ենթակետը:</p> <p>3. Հավելված 1-ի 8.2 կետի Ուղղություն 3-ից հետո “3-րդ փուլի” բառերը փոխարինել “3-րդ ուղղություն” բառերով:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Խմբագրվել է նշված կետը, ուղղելով տեղ գտած վրիպակները</p>
9.	ՀՀ ոստիկանություն 2011-02-02, թիվ 35/148	<p>1. Նախագծի 4-րդ կետի (Բարեփոխումների նպատակը) վերջին պարբերությունը շարադրել հետևյալ կերպ. «Այսիսով, բարեփոխումների նպատակն է մշակել ՄՍ իրավունքների կիրարկման, մտավոր գործունեության արդյունքների (մտավոր սեփականության օբյեկտների) պահպանության և պաշտպանության առավել արդյունավետ ընթացակարգեր և բարձրացնել հասարակության իրազեկման մակարդակը ՄՍ իրավունքների ոլորտում, այնպես, որ ՄՍ իրավունքների համակարգը նպաստի վերը նշված նպատակների իրացմանը»:</p> <p>2. 6.4.3 կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ոստիկանություն ԿՀԴԳՎ (ՄՍ ոլորտում</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	

		<p>կատարվող հանցագործությունների դեմ պայքարի վարչություն)»</p> <p>3. 6.4.3 կետում որպես իրավակիրարկման մարմին նախատեսել նաև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: Նշված առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 158-րդ հոդվածի 22-րդ կետով (Ցուցանակներում, ցուցափեղկերում, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման այլ միջոցներում և գովազդում այլ անձանց պատկանող և ՀՀ-ում պահպանվող ապրանքային նշանի կամ ֆիրմային անվանման օգտագործելը, եթե այդպիսի օգտագործման համար առկա չէ դրանց սեփականատիրոջ կողմից օրենքով սահմանված կարգով տրված թույլտվությունը) նախատեսված զանցանքի վերաբերյալ գործերը քննվում են տարածքային կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:</p>	<p>Չի ընդունվել, քանի որ եթե խոսքը վերաբերում է ապրանքային նշանի կամ ֆիրմային անվանման նկատմամբ իրավունքի խախտման դեպքերին, ապա հարցը կարգավորվում է օրենքով սահմանված՝ դատական կարգով: Պետք է նկատի ունենալ նաև, որ ցուցանակների և գովազդային վահանակների տեղադրման թույլտվությունները տալիս են տեղական ինքնակառավարման մարմինները, հետևապես հարցն ըստ էության կարող է կարգավորվել ի սկզբանե</p>	
--	--	---	---	--

		<p>6. 7.1.8 կետի դ/ բաժնի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվության նախատեսում»:</p> <p>7. 7.1.8 կետի դ/ բաժինը լրացնել նոր ենթակետով՝ «Մշակել և ներդնել ինտերնետ և հեռահաղորդակցության այլ ցանցերում մտավոր սեփականության օբյեկտների պահպանության և պաշտպանության լրացուցիչ ընթացակարգեր»:</p> <p>8. 5. 7.2.4 կետի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Փորձագիտական հիմնարկ և ՄՍ իրավունքների այլ փորձագետներ» քանի որ ՄՍ ոլորտի</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>քաղաքականության բարեփոխումների ամենահարմար, ամենաթափանցիկ և ամենաարդյունավետ ուղին: Այն կմշակի ՄՍ իրավակիրարկումը կարգավորող օրենքի նախագիծ և օրենսդրական նախաձեռնությամբ հանդես կգա ՀՀ Ազգային ժողովում:»</p>
--	--	--	--	---

		<p>փորձաքննությունները կարող են իրականացվել ոչ միայն «Փորձաքննությունների Ազգային Բյուրո» ՊՈԱԿ-ում այլ նաև ՀՀ ոստիկանության և ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական հիմնարկներում:</p> <p>9. 7.2.2 կետը խմբագրել առանց հստակեցնելու և սահմանափակելու աշխատակիցների քանակը: ՀՀ կառավարության կողմից որևէ նոր օրենսդրական ակտի ընդունումը մտավոր սեփականության ոլորտում ոստիկանության լիազորությունների վերաբերյալ գտնում ենք ոչ նպատակահարմար, քանի որ ոստիկանության լիազորությունները հստակ սահմանված են օրենքով և այլ իրավական ակտերով:</p> <p>10. Որպես ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում նախատեսել նաև ՀՀ ոստիկանության փորձաքննագիտական վարչության կարողությունների բարձրացումը ՄՍ ոլորտում համապատասխան փորձաքննություններ իրականացնելու նպատակով:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Նշված կետը շարադրվել է հետևյալ խմբագրությամբ՝ «Ոստիկանությունը, իր ՄՍ իրավակիրարկման վարչության միջոցով, պետք է արդյունավետ ստուգայցեր կամ այլ գործողություններ կատարի, ինչպես Երևանում, այնպես էլ դրա սահմաններից դուրս, մարզային ոստիկանության այլ աշխատակիցների հետ համագործակցելով:»</p> <p>7.2.4 կետը շարադրվել է նոր խմբագրությամբ</p>
--	--	--	---------------------------------------	--

	<p>«Առողջապահության նախարար</p>	<p>11. Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների համակարգի բարեփոխումների գործողությունների ծրագրից հանել հետևյալ գործողությունները՝</p> <ul style="list-style-type: none"> • Պետական մարմինների կողմից ծրագրային ապահովման լիցենզիաների թարմացում • Էկոնոմիկայի նախարարության կողմից խոշոր ընկերություններին աջակցում ծրագրային ապահովման լիցենզիաների թարմացման համար • Կենտրոնական բանկի կողմից տեղային բանկերին աջակցում իրենց ծրագրային ապահովման լիցենզիաների թարմացման համար: <p>12. «Վիճակագրություն» գործողությունում պատասխանատու հաստատություն սյունակում որպես կատարող նախատեսել նաև ՀՀ ոստիկանությունը:</p> <p>1. Նախագծով հաստատված հավելվածներն ամբողջությամբ անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական</p>	<p>Ընդունվել է մասամբ</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Գործողությունների ծրագրի 2.1 կետից հանվել են 2–րդ և 3–րդ պարբերությունները, որոնք վերաբերում են խոշոր ընկերություններին և կենտրոնական բանկին, իսկ 1–ին կետը շարադրվել է նոր խմբագրությամբ, «պետական մարմինների» բառերը փոխարինելով «պետական կազմակերպությունների» բառերով:</p> <p>«Վիճակագրություն» գործողությունում պատասխանատու հաստատություն սյունակում որպես կատարող նախատեսվել է նաև ՀՀ ոստիկանությունը:</p>
--	---------------------------------	--	---	--

10.		<p>ակտերի մասին» ՀՀ օրենք 41-րդ հոդվածի պահանջներին:</p> <p>2. Նախագծի 1-ին հավելվածի 6.4.3 կետում «ՀՀ-ում գերագույն դատական ատյանը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՀ-ում բարձրագույն դատական ատյանը» բառերով:</p> <p>3. Նախագծի 1-ին հավելվածի 6.4.3 կետում «Վերաքննիչ քաղաքացիական և քրեական դատարաններ» բառերից հետո անհրաժեշտ է ավելացնել նաև «վերաքննիչ վարչական դատարան» բառերը:</p> <p>4. Նախագծի 1-ին հավելվածի 6.4.3 կետում «Վարչական դատարանը (լուծում է քաղաքացիաիրավական հարաբերություններից ծագող վեճերը և այլն, երբ կողմերից մեկն ունի վարչական իրավասություն)» դրույթը խմբագրման կարիք ունի:</p> <p>5. Նախագծի 7.1, ինչպես նաև 7.1.6 կետերում օգտագործված «տվյալների բացառիկություն» արտահայտությունը հստակեցման կարիք ունի:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է, խոսքը վերաբերում է տվյալների նկատմամբ բացառիկ իրավունքին</p>	<p>Նշված կետը խմբագրված է և օգտագործված է ընդհանուր՝ «դատարաններ» տերմինը</p> <p>Նշված կետը խմբագրված է</p> <p>Խմբագրվել են 1-ին հավելվածի 7.1.6 կետը</p>
-----	--	---	---	---

		<p>6. Նախագծի 1-ին հավելվածի 7.1.8 կետի «դ» ենթակետում «քաղաքացիական պատժամիջոց» արտահայտությունն անհրաժեշտ է փոխարինել «քաղաքացիական պատասխանատվության» բառերով:</p> <p>7. Նախագծի 1-ին հավելվածի 7.1.8 կետի «դ» ենթակետում դատարանների մասնագիտացման վերաբերյալ դրույթը հստակեցման և խմբագրման կարիք:</p> <p>8. Նախագծի 1-ին հավելվածի 7.2.1 կետի 1-ին նախադասությունը հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 82-րդ հոդվածին, քանի որ դրա համաձայն՝ հայցը հարուցվում է պատասխանողի բնակության (գտնվելու) վայրի դատարան:</p> <p>9. Նախագծի 1-ին հավելվածի 7.2.1 կետի 2-րդ նախադասությունը հակասում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ և «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածներով նախատեսված վեճերի արբիտրաժային քննության կամավորության սկզբունքին, որի</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Խմբագրվել է նշված կետը, նկատի ունենալով, որ դատարանների մասնագիտացման հարցը կարող է քննարկվել ինչպես տարածքային առումով, այնպես էլ դատավորների մասնագիտացման տեսանկյունից</p> <p>Խմբագրվել է 7.2.1 կետը</p> <p>Խմբագրվել է 7.2.1 կետը</p>
--	--	---	---	--

		<p>համաձայն կողմերը իրենց ազատ կամահայտնության հիման վրա կարող են համաձայնության գալ առկա կամ հնարավոր բոլոր կամ որոշակի վեճերը (այդ թվում նաև մտավոր սեփականության իրավունքի բնագավառում) հանձնել արբիտրաժի լուծմանը: Միևնույն ժամանակ, նշված նախադասության մեջ գործածված «(միջնորդ դատարաններում)» բառերն անհրաժեշտ է հանել:</p> <p>10. Նախագծի 1-ին հավելվածի 7.2.3 կետում օգտագործված «վտանգավոր դեղորայք» արտահայտությունը նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ: Առաջարկվում է նշված կետում «բացթողումը» բառը փոխարինել «ներսբերում Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք» բառերով:</p> <p>11. Նախագծի 2-րդ հավելվածով սահմանված «Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարության» գործողությունների ծրագրի» 1.9 կետում «տվյալների բացառիկություն» արտահայտությունը հստակեցման կարիք ունի</p> <p>12. Նախագծի 2-րդ հոդվելվածով սահմանված «Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարության»</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Խմբագրվել է նշված կետը</p> <p>Հստակեցվել է նշված արտահայտությունը</p>
--	--	--	--	--

		<p>գործողությունների ծրագրի» 4.1 կետով որպես առանձին գործողություն նախատեսված է «ՄՍ իրավունքների կարևորության մասին իրազեկում և հարգալից վերաբերմունք ՄՍ իրավունքների նկատմամբ», իսկ այդ գործողության համար պատասխանատու հաստատությունների շարքում որպես 2-րդ պատասխանատու նախատեսված է ՀՀ առողջապահության նախարարությունը: Հաշվի առնելով, որ մտավոր սեփականության իրավունքների կարևորության մասին իրազեկումը դուրս է ՀՀ առողջապահության նախարարության իրավասությունների շրջանակից, ինչպես նաև մտավոր սեփականության իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքը հանդիսանում է յուրաքանչյուր անձի պարտականությունը, առաջարկվում է նշված գործողության կատարման համար պատասխանատու հաստատությունների շարքից հանել ՀՀ առողջապահության նախարարությունը:</p>		
11.	<p>ՀՀ արդարադատության նախարարություն</p>	<p>1. Ներկայացված ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի 4-րդ կետով նախատեսված որոշման ուժի մեջ մտնելու ժամկետներին վերաբերող դրույթներն անհրաժեշտ է հանել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված որոշումն իր բնույթով հանդիսանում է անհատական իրավական ակտ, որի վրա տարածվում է «Իրավական</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նշված դրույթները հանվել են նախագծից</p>

		<p>ակտերի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:</p> <p>2. Նախագծի 1-ին կետով հաստատվող մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության ռազմավարության (այսուհետ՝ ռազմավարություն) 6-րդ գլխի 6.2-րդ կետում օգտագործվող օրենք-ների անվանումներն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջներին՝ նշելով համապատասխան օրենքի կրճատ անվանումը: Նույն դիտողությունը վերաբերում է նաև ռազմավարության 7-րդ գլխում օգտագործվող համապատասխան օրենքների անվանումներին:</p> <p>3. Ռազմավարության 7-րդ գլխի 7.1.7-րդ ենթակետում խոսքը գնում է ՀՀ կառավարության կողմից միջազգային պայմանագրերի վավերացման մասին, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին, որոնց համաձայն ՀՀ միջազգային պայմանագրերի վավերացման լիազորությունը վերապահված է ՀՀ Ազգային ժողովին:</p> <p>4. Ռազմավարության 7-րդ գլխի 7.1.8-րդ ենթակետում պարզ չէ, թե որն է հանդիսանում այն երրորդ կողմը, որի դեմ պայքարելու գործում նշված պետական մարմինները պետք է բարձր</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Օրենքների անվանումները համապատասխանեցվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին:</p> <p>Ռազմավարության 7-րդ գլխի 7.1.7-րդ ենթակետը խմբագրվել է</p> <p>Հստակեցվել է նշված կետը</p>
--	--	---	--	---

		<p>կարգապահություն ցուցաբերեն և համախմբեն իրենց ուժերը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջները, որոնց համաձայն «Իրավական ակտերի լեզուն պետք է լինի պարզ, հստակ և մատչելի: Իրավական ակտում չի թույլատրվում հնացած և բազմիմաստ բառերի ու արտահայտությունների, փոխաբերական իմաստով բառերի կամ արտահայտությունների, թաքնված ենթատեքստերի, ինչպես նաև օտարալեզու տերմինների անհարկի օգտագործումը: Իրավական ակտի դրույթները պետք է ընկալվեն միանշանակ, ապահովեն հուզական չեզոքություն»:</p> <p>5. Ռազմավարության 7-րդ գլխի 7.1.8-րդ ենթակետի գ/ պարբերությունում խոսքը գնում է ՀՀ կառավարության կողմից մտավոր սեփականության ոլորտում օրենսգրքի կամ առանձին օրենքի ընդունման մասին, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրությամբ սահմանված պահանջներին: Այդ առումով հայտնում ենք, որ նշված հարաբերություններում խոսքը կարող է գնալ միայն ՀՀ կառավարության կողմից ՀՀ Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու մասին: Բացի այդ ռազմավարությամբ նախատեսվում է մտավոր սեփականությանը վերաբերող</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նշված պարբերությունը շարադրվել է նոր խմբագրությամբ՝ «ՀՀ կառավարությունը պետք է ընտրի ՄՍ իրավունքների կիրարկման քաղաքականության բարեփոխումների ամենահարմար, ամենաթափանցիկ և ամենաարդյունավետ ուղին: Այն կմշակի ՄՍ իրավակիրարկումը կարգավորող օրենքի նախագիծ և օրենսդրական</p>
--	--	---	--------------------	---

		<p>օրենսգրքում նախատեսել դատական ընթացակարգերին վերաբերող դրույթներ: Այդ առումով գտնում ենք, որ նշված իրավական ակտում դատական ընթացակարգերին վերաբերող դրույթներ նախատեսվել չեն կարող, քանի որ վերջիններս նշված իրավական ակտի կարգավորման առարկան հանդիսանալ չեն կարող:</p> <p>6. Ռազմավարության 7-րդ գլխի 7.3-րդ կետում, որպես մտավոր սեփականության իրավունքների մասին իրազեկման բարձրացման գործողություն, նախատեսվում է ձեռնարկել քայլեր դատավորների գիտելիքների խորացման ուղղությամբ, որտեղ, որպես պատասխանատու կատարող մարմին նախատեսվում է ՀՀ արդարադատության նախարարությունը: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ վերապատրաստման միջոցով դատավորների մասնագիտական գիտելիքների կատարելագործման լիազորությունը գործող ՀՀ օրենսդրությամբ վերապահված չէ ՀՀ արդարադատության նախարարությանը: Նշված լիազորությունը ՀՀ վճարել դատարանի նախագահի 2006 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 24-Ն որոշմամբ հաստատված ՀՀ դատական դպրոցի կանոնադրության 7-րդ կետով սահմանված պահանջների համաձայն, հանդիսանում է ՀՀ դատական դպրոցի հիմնական գործառույթը: Հաշվի առնելով</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Նախաձեռնությամբ հանդես կգա ՀՀ Ազգային Ժողովում:»</p> <p>Նշված կետը խմբագրվել է և տեքստից հանվել է ՀՀ արդարադատության նախարարության անվանումը</p>
--	--	---	--------------------	---

		<p>վերոգրյալը հայտնում ենք, որ ռազմավարության թիվ 2 հավելվածից, որպես մտավոր սեփականության իրավունքների համակարգի բարեփոխումների գործողությունների ծրագրի պատասխանատու կատարող, անհրաժեշտ է հանել ՀՀ արդարադատության նախարարությանը վերաբերող դրույթները:</p> <p>7. Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-3-րդ մասերով, ինչպես նաև 42-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ հայտնում ենք, որ ռազմավարության մի շարք գլուխներում օգտագործվում են գործող օրենսդրությամբ չնախատեսված, հստակեցման և պարզաբանման կարիք ունեցող մի շարք հասկացություններ և արտահայտություններ, որոնք միանշանակ չեն ընկալվում և հստակեցման անհրաժեշտություն ունեն: Մասնավորապես խոսքը գնում է ռազմավարության 7.1.8-րդ ենթակետի դ/ պարբերությունում օգտագործվող «իրավակիրարկման մարմինների համար ի պաշտոնե իրավունքների նախատեսում», «քաղաքացիական պատժամիջոցների նախատեսում», «կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների հիմնադրում» արտահայտությունների մասին կամ 7-րդ գլխի 7.2.6-րդ ենթակետում օգտագործվում է «պետական փաստաբաններ»</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Ռազմավարության 7.1.8-րդ ենթակետի դ/ պարբերությունում օգտագործվող «իրավակիրարկման մարմինների համար ի պաշտոնե իրավունքների նախատեսում», «քաղաքացիական պատժամիջոցների նախատեսում», «կոլեկտիվ կառավարման կազմակերպությունների հիմնադրում» արտահայտությունները փոխարինվել են համապատասխանաբար «իրավակիրարկման մարմինների համար ի պաշտոնե գործելու իրավունքների նախատեսում»,</p>
--	--	---	--------------------	---

		<p>հասկացությունը, ինչը նախատեսված չէ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև գործող ՀՀ օրենսդրությամբ կամ 7-րդ գլխի 7.4 կետում նշված «գալիք ամիսներին» և «մտավոր սեփականության որոշ հիմնական իրավատերեր», կամ «քրեական իրավախախտումներ», «ՀՀ մաքսային կոմիտե» և այլն:</p>	<p>«քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվության նախատեսում», «հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների իրավատերերի շրջանում համապատասխան իրավատերերի գույքային իրավունքների կոլեկտիվ հիմունքներով կառավարման կազմակերպությունների հիմնադրում» արտահայտություններով, իսկ 7-րդ գլխի 7.2.6-րդ ենթակետում օգտագործվող «պետական փաստաբաններ» հասկացությունը ընդհանրապես հանվել է, 7-րդ գլխի 7.4 կետում նշված «գալիք ամիսներին» և «մտավոր սեփականության որոշ հիմնական իրավատերեր» արտահայտությունները փոխարինվել են «առաջիկա ամիսներին» և «ՄՍ որոշ իրավատերեր», իսկ «քրեական իրավախախտումներ», «ՀՀ</p>
--	--	--	---

		<p>8. Նախագծի 2-րդ կետով հաստատվող հավելվածի աղյուսակի 2-րդ կետի 5-րդ՝ պատասխանատու կատարող սյունակում նշված «ՀԿԲ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՀ կենտրոնական բանկ, համաձայնությամբ» բառերով՝ նկատի ունենալով այն հնագամանքը, որ ՀՀ կառավարության կողմից ՀՀ կենտրոնական բանկին հանձնարարականներ տրվել չեն կարող:</p> <p>9. Նախագծի 2-րդ կետով հաստատվող հավելվածի աղյուսակի 3-րդ կետի 5-րդ՝ պատասխանատու կատարող սյունակում նշված «Պետական վերահսկողության կոմիտե» բառերն անհրաժեշտ է փոխարինել «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե» բառերով:</p> <p>10. Հարկ է նշել նաև, որ ներկայացված ռազմավարության նախագծում պահպանված</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>մաքսային կոմիտե» բառերը փոխարինվել են «քրեորեն պատժելի իրավախախտումներ» և «ՀՀ մաքսային ծառայություն» բառերով</p> <p>Նախագծի 2-րդ կետով հաստատվող հավելվածի աղյուսակի 2.3-րդ կետը հանվել է</p> <p>Նախագծի 2-րդ կետով հաստատվող հավելվածի աղյուսակի 3.5-րդ կետի «Պետական վերահսկողության կոմիտե» բառերն փոխարինվել են «ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե» բառերով:</p> <p>Նախագիծը լրամշակվել և համապատասխանեցվել է</p>
--	--	---	--	---

		<p>չեն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված լեզվին վերաբերող պահանջները: Ելնելով վերոհիշյալից, գտնում ենք, որ ներկայացված ռազմավարությունն անհրաժեշտ է ամբողջությամբ լրամշակել և համապատասխանեցնել գործող իրավական ակտերի պահանջներին:</p> <p>Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված ռազմավարությունն անհրաժեշտ է համաձայնեցնել նաև շահագրգիռ պետական կառավարման մարմինների և կազմակերպությունների հետ: Մասնավորապես ռազմավարությունն անհրաժեշտ է համաձայնեցնել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ վճռաբեկ դատարանի հետ:</p>		<p>գործող իրավական ակտերի պահանջներին և ներկայացվել է նաև այլ շահագրգիռ մարմինների քննարկմանը</p>
--	--	--	--	---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ